2014

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հունվար-Հունիս/ 2014

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

2014թ. առաջին եռամսյակում ՀՆԱ կազմել է 750.4 մլրդ դրամ, աճը՝ 3.1%, երկրորդ եռամսյակում ՀՆԱ աճը գնահատվում է շուրջ 3.2%

2014թ. պետական բյուջեի հիմքում դրված է ՀՆԱ 5.2% աճը ապահովելու համար երկրորդ կիսամյակում անհրաժեշտ է ապահովել շուրջ 6.5% աճ

ՀՆԱ արտադրության կառուցվածքում էական տեղաշարժեր չեն արձանագրվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են արդյունաբերության, շինարարության, առևտրի և զուտ հարկերի տեսակարար կշիռները, աճել են ծառայությունների և գյուղատնտեսության տեսակարար կշիռները

ՀՆԱ սպառման կառուցվածքում շարունակում են բարձր մնալ վերջնական սպառման ծախսերը

Համախառն կուտակում/ ՀՆԱ ցուցանիշը, ի տարբերություն նախորդ 5 տարիների առաջին եռամսյակների, աճել է 0.4 տոկոսային կետով

ՀՆԱ ԻՐԱԿԱՆ ԱՃ 2011-2014թթ., %



ՀՆԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՀՆԱ ՍՊԱՌՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՀԱՄԱԽԱՌՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ/ՀՆԱ, %



2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը հունվար-հունիսին կազմել է 3.4%, ինչը վերջին 4 տարիների ամենացածր ցուցանիշն է

2014թ. առաջին կիսամյակում տնտեսության բոլոր ճյուղերում աճ է արձանագրվել՝ բացի արդյունաբերությունից, որտեղ արտադրության ծավալը մնացել է 2013թ. հունվար-հունիսի մակարդակին

Առավելագույն հավելաճ գրանցվել է առևտրում՝ 5.6%

Տնտեսական ազատության 2014թ. ինդեքսում Հայաստանը 41-րդ տեղում է 68.9 միավորով՝ նախորդ տարվա համեմատ նահանջելով 3 տեղով և 0.5 միավորով

Ըստ ազատության աստիճանի որակման՝ Հայաստանը շարունակում է մնալ չափավոր ազատ երկրների խմբում

Տարածաշրջանային համա-տեքստում ընդգրկված է Եվրոպայի խմբում և 43 երկրների շարքում զբաղեցնում է 18-րդ տեղը

Զբաղեցնում է առաջին տեղը ԱՊՀ երկրների շարքում, իսկ հարևան երկրներից զիջում է միայն Վրաստանին

Ամենացածր միավորով գնահատվել է «Օրենքի գերակայությունը» հենասյունը

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ, %



ԹՈՂԱՐԿՄԱՆ ԾԱՎԱԼԻ ԱՃ, % ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ

	2011 S1	2012 S1	2013 S1	2014 S1
Արդյունաբերական արտադրանք	12.8	13.0	8.3	0.0
Գյուղատնտեսական արտադրանք	2.3	8.1	2.1	1.4
Շինարարություն	-13.8	-6.7	-8.8	0.4
Առևտրի շրջանառություն	2.7	2.4	3.5	5.6
Ծառայություններ	6.3	12.0	4.4	4.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2014 ԻՆԴԵՔՍՈՒՄ

	2014	Փոփոխություն	
Դիրք	41	▼	-3.0
Միավոր	68.9	▼	-0.5
Օրենքի գերակայություն			
Սեփականության իրավունքներ	30.0	—	0.0
Կոռուպցիայից ազատություն	26.7	▲	0.7
Կառավարության մասնակցության չափ			
Ֆիսկալ ազատություն	86.5	▼	-1.5
Պետական ծախսեր	81.3	▼	-0.8
Կարգավորման արդյունավետություն			
Գործարար ազատություն	83.1	▼	-4.5
Աշխատուժի ազատություն	78.5	▲	1.4
Մոնետար ազատություն	77.0	▲	4.0
Բաց շուկաներ			
Առևտրի ազատություն	85.5	▲	0.1
Ներդրումային ազատություն	70.0	▼	-5.0
Ֆինանսական ազատություն	70.0	—	0.0

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2014թ. առաջին կիսամյակում արդյունաբերության աճի բացակայությունը պայմանավորված է հիմնականում հանքագործական արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման բաժինների ծավալների կրճատմամբ

Արդյունաբերության մեջ առավելագույն դրական նպաստ ունեն՝

- ✓ հիմնային մետաղների արտադրությունը
- ✓ ծխախոտային արտադրատեսակների արտադր.
- ✓ սննդամթերքի արտադր.
- ✓ ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը
- ✓ թղթի և թղթե արտադրատեսակների արտադր.

Հիմնային մետաղների արտադրության 9.8% աճին առավելագույն նպաստում ունեցել է թանկարժեք և հիմնային գունավոր մետաղների արտադրությունը՝ 8.2 տոկոսային կետ (տեսակարար կշիռը 60.8%)

Սննդամթերքի արտադրության 2.3% աճին առավելագուն նպաստում ունեցել է ալրաղաց արդյունաբերական մթերքի արտադրությունը՝ 1.1 տոկոսային կետ (տ/կ 20.5%)

Խմիչքների արտադրության 1.0% նվազումը պայմանավորված է հիմնականում կոնյակի արտադրության ծավալների 23.7% նվազմամբ (տ/կ 53.7%)

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ

	Արտադրանքի ծավալ մլրդ. դրամ	Աճ 2013թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածք, %	Նպաստման չափ, տոկոսային կետ
Արդյունաբերություն	579.3	0.0	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	94.3	-9.5	16.3	-1.7
Մշակող արդյունաբերություն	368.7	2.9	63.6	1.9
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	107.5	-4.8	18.6	-0.2
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	8.8	6.0	1.5	0.1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԳ ԵՐԿՆԻՇ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Պատրաստի արտադրանքի իրացում, մլրդ դրամ	Արտահանում, մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ, %
Արդյունաբերություն	579.34	572.40	215.27	37.6
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	94.29	87.66	57.28	65.3
Մետաղական հանքաքարի արդյունահանում	92.53	85.72	56.73	66.2
Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	1.77	1.93	0.56	28.8
Մշակող արդյունաբերություն	368.69	368.40	149.62	40.6
Սննդամթերքի արտադրություն	135.50	130.59	5.44	4.2
Խմիչքների արտադրություն	50.96	51.47	30.93	60.1
Ծխախոտային արտադրատեսակների արտ.	30.03	29.75	20.75	69.7
Հագուստի արտադրություն	3.21	3.31	1.65	49.8
Թղթի և թղթե արտադրատեսակների արտ.	6.39	6.24	0.00	0.0
Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	3.98	3.91	0.09	2.4
Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	3.33	3.52	0.30	8.5
Դեղագործական արտադրանքի արտ.	2.68	2.56	1.49	58.1
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	10.03	11.08	1.15	10.4
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	20.21	19.95	4.07	20.4
Հիմնային մետաղների արտադրություն	81.96	85.84	75.46	87.9
Պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն	5.08	5.17	0.29	5.7
Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտ.	2.31	2.41	1.35	56.1
Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	2.02	2.00	0.86	43.0
Մշակող արդյունաբերության այլ ճյուղեր	11.02	10.60	5.79	54.6
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	107.51	107.51	8.37	7.8
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և	8.84	8.84	-	-

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, շարունակություն

Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների ծավալի 9.4% նվազման 6.4 տոկոսային կետը բաժին է ընկնում ցեմենտի արտադրությանը (տ/կ 31.2%), 1.2-ը՝ ապակու և ապակե արտադրատեսակների արտադրությանը (տ/կ 30.7%), 0.6-ը՝ բետոնից, ցեմենտից և գիպսից շինվածքների արտադրությանը՝ (տ/կ 24.6%): Այս ճյուղերի նվազումը հիմնականում պայմանավորված է արտահանման ծավալների կրճատմամբ

Պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրության ծավալների 15.4% նվազումը պայմանավորված է մետաղե շինարարական կոնստրուկցիաների (տ/կ 54.6%) և այլ պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրության (տ/կ 35.8%) ծավալների նվազմամբ, որոնց ընդհանուր նպաստումը կազմել է -13.4 տոկոսային կետ

Հանքագործական արդյունաբերության ծավալի 9.5% նվազման 8.8 տոկոսային կետը բաժին է ընկնում 98.1% տեսակարար կշիռ ունեցող մետաղական հանքաքարի արդյունահանմանը, իսկ 0.7 տոկոսային կետը՝ հանքագործ արդյունաբերության այլ ճյուղերին

Հանքագործական արդյունաբերության ծավալների նվազման հիմնական պատճառը 1-ին եռամսյակում բնակլիմայական պայմաններն էին, որոնք հնարավորություն չեն տվել լիարժեք շահագործել բացահանքերը, իսկ 2-րդ եռամսյակում հիմնականում իրականացվել են մակաբացման աշխատանքներ: Համաշխարհային շուկայում մետաղների գների տատանումները էական ազդեցություն չեն ունեցել ոլորտի առաջարկի խթանման առումով

Մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալների -9.0% նվազման 4.1 տոկոսային կետը պայմանավորված է պղնձի հանքաքարի, 2.8 տոկոսային կետը՝ այլ գունավոր մետաղների հանքաքարի, և 2.1 տոկոսային կետը՝ թանկարժեք մետաղների հանքաքարի արդյունահանման ծավալների նվազմամբ

ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

	Արտադրանքի ծավալ մլրդ. դրամ	Աճ 2013թ. նույն ժ/շ նկատմամբ %	Կառուցվածք %	Նպաստման չափ տոկոսային կետ
Սննդամթերքի արտադրություն	135.5	2.3	36.8	0.8
Հիմնային մետաղների արտադր.	82.0	9.8	22.2	2.3
Խմիչքների արտադրություն	51.0	-1.0	13.8	-0.1
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	30.0	34.3	8.1	1.6
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադր.	20.2	-9.4	5.5	-0.6
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադր.	10.0	15.6	2.7	0.4
Պատրաստի մետաղե արտադր. արտադրություն	5.1	-15.4	1.4	-0.3
Այլ	34.9	-	9.5	-1.2

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ

	Արտադրանքի ծավալ մլրդ. դրամ	Աճ 2013թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածք, %	Նպաստման չափ, տոկոսային կետ
Մետաղական հանքաքարի արդյունահանում	92.5	-9.0	100.0	-
Պղնձի հանքաքարի արդյունահանում	26.5	-13.6	28.6	-4.1
Թանկարժեք մետաղների հանքաքարերի արդյունահանում	4.3	-33.0	4.7	-2.1
Այլ գունավոր մետաղների հանքաքարերի	61.7	-4.4	66.7	-2.8

ՊՂՆՁԻ ԵՎ ՄՈԼԻԲԴԵՆԻ ԳՆԵՐ, ՀԱԶԱՐ ԱՄՆ ԴՈԼԱՐ/ՏՈՆՆԱ



4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական և ապահովագրական գործունեությունն առաջատարն է ծառայությունների կառուցվածքում

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների թիվն աճել է 17.3%-ով, ժամանողների թվաքանակը գերազանցում է մեկնողներինը շուրջ 21 հազար մարդով

2014թ. առաջին կիսամյակում ՏՀՏ ոլորտի աճը կազմել է 0.4%, աճի ցածր տեմպը հիմնականում պայմանավորված է ՏՀՏ հիմնական մասը կազմող հեռահաղորդակցության ծավալի 0.1%-ով նվազմամբ

Ի տարբերություն նախորդ երկու տարիների՝ աճ է արձանագրվել ՏՀՏ արտադրության ոլորտում

Ցանցային պատրաստվածության 2014թ. ինդեքսով Հայաստանը 65-րդ տեղում է՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 17 տեղով

Ինդեքսի 10 հենասյուներից 9-ով Հայաստանը բարելավել է և դիրքը և միավորը

Քաղաքական և կարգավորող միջավայր հենասյան միավորը և դիրքը մնացել են անփոփոխ, ընդ որում՝ այս հենասյունով Հայաստանի դիրքը ամենացածրն է՝ 104

Գնահատված ԱՊՀ երկրների շարքում ՑՊԻ միավորով Հայաստանը 4-րդն է, իսկ հարևան երկրներից առաջ է միայն Իրանից

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

	2011 S1	2012 S1	2013 S1	2014 S1
Զբոսաշրջիկների թվաքանակ, հազար մարդ*				
Ժամանողներ	*266.2*	*281.0*	*321.3*	496.0
Մեկնողներ	*274.6*	*302.1*	*343.3*	475.0
Զբոսաշրջիկների թվաքանակի աճ, %				
Ժամանողներ	15.6	5.1	14.3	17.3
Մեկնողներ	18.3	9.3	13.6	14.8

ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, ԾԱՎԱԼԸ ՄԼՐԴ ԴՐԱՄ/ԱՃԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2011 S1		2012 S1		2013 S1		2014 S1	
ՏՀՏ, այդ թվում	94.0	-1.1	100.3	5.2	109.6	11.9	110.4	0.4
արտադրություն	1.0	9.7	0.9	-6.5	0.9	-7.7	0.9	3.7
առևտուր	9.8	29.9	9.4	-4.9	12.7	28.4	13.2	1.8
ծառայություններ, որից՝	83.3	-3.7	89.9	6.4	96.0	10.3	96.3	0.2
հեռահաղորդակցություն	74.6	-3.8	78.2	4.1	81.8	9.3	81.7	-0.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ ՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԻՆԴԵՔՍՈՒՄ

	Դիրք		Միավոր	
	2014	14/13	2014	14/13
Ցանցային պատրաստվածության ինդեքս	65	▲ 17	4.0	▲ 0.2
Միջավայրի ենթաինդեքս	83	▲ 7	3.8	▲ 0.1
Պատրաստվածության ենթաինդեքս	51	▲ 22	5.1	▲ 0.5
Կիրառելիության ենթաինդեքս	73	▲ 6	3.7	▲ 0.3
Ազդեցության ենթաինդեքս	67	▲ 16	3.5	▲ 0.2

6. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

2014թ. առաջին կիսամյակում արտահանման աճի ցածր (0.8) ցուցանիշի վրա հիմնականում ազդել է հունիսին արտահանման 9%-ով նվազումը: Ցուցանիշի հունիս ամսվա նվազումը մասամբ պայմանավորված է Լարսի անցակետի փակմամբ

Արտահանմամբ ներմուծման ծածկույթի գործակիցը (0.35) գրեթե անփոփոխ է

Արտահանման ապրանքային կառուցվածքը համակենտրոնացման ավելի բարձր աստիճան է դրսևորել, քան ներմուծմանը. առաջին 4 խոշոր ապրանքախմբերի արտահանման և ներմուծման տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 84.3% տոկոսային կետ) և 49.0% (-1.9 տոկոսային կետ)

Արտահանման մոտ 59.5% բաժին է ընկնում առևտրային հիմնական գործընկերներին՝ Ռուսաստան, Գերմանիա, Չինաստան, Բուլգարիա, Իրան, ԱՄՆ

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ

	2011 S1	2012 S1	2013 S1	2014 S1
Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար				
Արտահանում	603.1	636.8	700.9	706.2
Ներմուծում	1891.1	2013.6	1994.6	2016.8
Առևտրաշրջանառություն	2494.2	2650.4	2695.5	2723.0
Առևտրի հաշվեկշիռ	-1288.0	-1376.8	-1293.7	-1310.6
Արտաքին առևտրի աճ, %				
Արտահանում	31.1	5.6	10.1	0.8
Ներմուծում	11.0	6.5	-0.9	1.1
Առևտրաշրջանառություն	15.3	6.3	1.7	1.0

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



7. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

2014թ. առաջին եռամսյակում օտարերկրյա ներդրումների ներհոսքը կազմել է 289.6 մլրդ դրամ, որի 20.5%-ը կամ 59.3 մլրդ դրամը կազմել է զուտ ներհոսքը

Ներհոսքի 61 և զուտ ներհոսքի 80%-ը բաժին է ընկել էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը

Ներդրումների հիմնական ներհոսքը (63.7%) արձանագրվել է Ռուսաստանի Դաշնությունից

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ 2014Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, ՄԼՐԴ ԴՐԱՄ

	Ներհոսք	Զուտ ներհոսք
Ընդամենը ներդրումներ	289.6	59.3
Ուղղակի ներդրումներ	201.9	69.6

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՅԱ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ/ՀՆԱ, %



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔՆ ՈՒ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ՄԼՐԴ ԴՐԱՄ



1. Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
2. Հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր
3. Մետաղական հանքաքարի արդյունահանում
4. Հիմնային մետաղների արտադրություն
5. Հեռահաղորդակցություն
6. Խմիչքների արտադրություն
7. Այլ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔՆ ՈՒ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔՆ ԸՍՏ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԼՐԴ ԴՐԱՄ



1. Ռուսաստան 2. Կիպրոս 3. Գերմանիա
4. Մեծ Բրիտանիա 5. Նիդերլանդներ 6. Լիբանան 7. Այլ

8. ԳՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2014թ. առաջին կիսամյակում սպառողական գների ինդեքսը պահպանվել է թիրախավորված միջակայքում

Գների ամենաբարձր աճն է արձանագրվել ծառայությունների գծով, ինչը հիմնականում պայմանավորված է բնակարանային-կոմունալ ծառայությունների գների աճով (119.5%)

Ի տարբերություն նախորդ երկու տարիների՝ 2014թ. առաջին կիսամյակում արձանագրվել է գյուղմթերք արտադրողների իրացման գների աճ

Միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 160.9 հազար դրամ (գնահատական), նախորդ տարվա 150.3 հազար դրամի դիմաց

2014թ. երկրորդ եռամսյակում նվազագույն աշխատավարձը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը 1.3 անգամ, և 1.3 անգամ զիջում է նվազագույն սպառողական զամբյուղին

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ,
ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2011 S1	2012 S1	2013 S1	2014 S1
Սպառողական գների ինդեքս	109.9	102.2	104.1	104.0
Պարենային ապրանքներ	114.8	101.8	104.5	102.2
Ոչ պարենային ապրանքներ	103.1	103.9	105.3	102.4
Ծառայություններ	105.0	102.0	102.6	108.2

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ,
ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2011 S1	2012 S1	2013 S1	2014 S1
Արդյունաբերողների արտ. ԳԻ	112.6	106.1	104.8	108.7
Գյուղմթերք արտ. իրացման ԳԻ	135.9	96.4	91.9	105.5
Արտահանման միջին ԳԻ	112.6	97.0	104.0	102.9
Ներմուծման միջին ԳԻ	107.4	108.9	104.4	104.6

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐ, ԸՆԹԱՑԻԿ ԳՆԵՐՈՎ, ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ